

### ՃՐԱԳԱԼՈՅՑ ԾՆՆԴԵԱՆ

«Ողորմութիւն եւ նշմարտութիւն պատահեցին»  
 «Արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեցին»:  
 «Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ»  
 «Արդարութիւն յերկնից երեւեցաւ» Սղմ. 26. 11-12):

Այս մարգարեական սաղմոսը իր լրումին կը յանգէր այս ծննդեան նրագալոյցի իրիկունը, երբ երկինք եւ երկիր իրարու կը հանդիպին:

Երբ Աստուած եւ մարդ գիրար կը համբուրեն:

Երկինքի հրեշտակներ հովիւներուն հետ «Փառք ի բարձունս կ'երգեն»:

Երկինքի մեսիական աստղը ուրախութեամբ կ'առաջնորդէ երեք մոզերը մինչեւ մարդացեալ Աստուծոյ մօտ՝ Բեդթեհէմ ֆաղաբը:

Աստուած մարդացաւ, այսինքն նշմարտութիւնը երկրի վրայ ծնաւ,

Աստուծոյ արդարութիւնը երկինքէն երեւեցաւ:

Երկնային խաղաղութիւնը համբոյր տուաւ մարդկութեան:

Հրեայ ժողովուրդը այս Սաղմոսը կարդալով՝ կը սպասէր Մեսիան, որ Աքրահամին եւ անոր որդւոյն Դաւիթ թագաւորին խոստացուած էր: Վերջապէս, այսօր Բեթղեհէմի մէջ, կը ծնէր Քրիստոսը, որ յաւիտենական թագաւոր պիտի ըլլար եւ մարդկութեան պիտի բերէր Աստուծոյ ողորմութիւնը, նշմարտութիւնը, արդարութիւնը եւ խաղաղութիւնը:

Իսկ Յոյն ժողովուրդը, իր փիլիսոփայական նամբով՝ դարեբով փնտռած էր զԱստուած: Այն համոզումի եկած էր թէ՛ մինչեւ որ երկինքէն Աստուած չ'իջնէր երկրի վրայ, մարդկութիւնը պիտի չունենար ողորմութիւն, նշմարտութիւն, արդարութիւն եւ խաղաղութիւն:

Այսպէս, Աստուած ինքզինքը կը

յայտնէր մարդկութեան, իւրաքանչիւրին կարողութեան չափով եւ հասկցած լեզուով: Հրեաներուն յայտնուեցաւ հաւատքի նամբով՝ իսկ Յոյներուն՝ փիլիսոփայական նամբով:

«Ի լրումն ժամանակի», ինչպէս պիտի ըսէր Պօղոս առաքեալ, Աստուած զրկեց իր Միածին Որդին որ Ս. Կոյս Մարիամէն ծնաւ:

ա. Ողորմութիւնը.– Աստուածային ծնունդը յայտնուեցաւ նախ՝ հովիւներուն, որոնք գիշերուան մէջ, իրենց հօտին պահպանութիւնը կ'ընէին:

Երկնային հրեշտակը հովիւներուն կ'աւետէր ըսելով.–

«Այսօր ձեզի Փրկիչ մը ծնաւ Դաւիթի ֆաղաբին մէջ, որ է Օծեալ Տէր»:

Որով Բարին Աստուած իր ողորմութիւնը ցոյց տուաւ պարզ, խոնարհ եւ անուս հովիւներուն, որոնք եւս կը սպասէին վոստաոցեալ Մեսիան, այսինքն Քրիստոսը: Հովիւները շուտով գացին եւ գտան Մարիամը եւ Յովսէփը եւ մտարին մէջ պառկած Մանուկը: Հովիւները կը փառաւորէին զԱստուած՝ իրենց ցոյց տուած ողորմութեան եւ ֆաղցրութեան համար: (Լկս. Բ. 11-20):

Բ. Աստուած իր նշմարտութիւնը ցոյց տուաւ գիտութեամբ նամբով՝ երեք մոզերուն, որոնք հմուտ աստղաբաշխեր էին եւ կը ներկայացնէին իրենց դարուն, գիտութիւնը եւ իմաստութիւնը: Իրենք ալ կը փնտռէին Աստուծոյ ողորմութիւնը, նշմարտութիւնը, արդարութիւնը եւ խաղաղութիւնը: Այս մոզերը, ըստ

աւանդութեան կը կոչուէին Մելիոն, Գասպար եւ Պաղտասար. որոնք Արեւելի մէջ, տեսան երկինքի վրայ, նոր աստղի մը ծնունդը, որ կ'աւետէր Նոր Արքայի մը ծնունդը: Անոնք իրենց գուշակութիւնը իրականացած տեսնելու յոյսով՝ քամբայ ելան, եւ երկարատեւ քամբորդութենէն ետք, նախ՝ Երուսաղէմ մտան, մտածելով որ նորածին թագաւորը ծնած պիտի ըլլար թագաւորական պալատի մը մէջ: Բայց հասկցած թէ Նոր Արքան ծնած էր Բեթղեհէմի մէջ, ինչպէս գրուած էր Միքիայի Մարգարէի գրքին մէջ: Ուստի մեծ ուրախութեամբ գացին Բեթղեհէմ, տունը մտնելով՝ տեսան ծնած Նոր Արքան եւ անոր մայրը՝ Մարիամը, ինկան երկրպագութիւն ըրին Անոր, եւ իրենց գանձերը բանալով՝ ընծաներ մատուցին Անոր ոսկի, կնդրուկ եւ գմուռս, որոնք կը յատկանշէին Նոր Արքային թագաւորութիւնը, Քահանայութիւնը եւ յաւիտեանական Փրկութիւնը համայն մարդկութեան:

Մոգերու անձին մէջէն գիտութիւնը եւ իմաստասիրութիւնը իրենց մեծարանքը կը յայտնեն Քրիստոսի թագաւորութեան: Նոյն ատեն կը փաստեն թէ՛ գիտութիւն եւ կրօնք գիրար չեն հակասեր, այլ ընդհակառակը գիրար կը լրացնեն:

գ.- Արդարութիւնը. Այս մոգերուն միջոցաւ Աստուած իմացուց Հերովդէս թագաւորին, աւագանիին, քահանայապետներուն եւ Երուսաղէմացիներուն Նոր Արքային ծնունդը: Երբ մոգերը Երուսաղէմ հասան՝ հարցուցին. «Ո՞ւր է այն տեղը, որ հրէից թագաւորը ծնաւ»: Երբ Հերովդէս լսեց որ նոր թագաւոր մը ծնած է՝ խռովեցաւ, սարսափ պատեց իր ամբողջ էութիւնը, իրեն հետ նաեւ քահանայապետները եւ ամբողջ Երուսաղէմ քաղաքը: Թագաւորը իսկոյն կանչել տուաւ քահանայապետները եւ Ար. Գրոց դպիրները որպէս զի իրեն ըսեն թէ ո՞ւր պիտի ծնէր Հրէից թագաւորը:

Անոնք ալ ցոյց տուին իրեն ըսին թէ ո՞ւր պիտի ծնէր Հրէից թագաւորը: Անոնք ալ ցոյց տուին իրեն Միքի մարգարէին գիրքը. «Եւ դուն, Բեթղեհէմ, Եփրաթայ, Յուդայի իշխաններուն մէջ քնաւ պատիկ չես, որովհետեւ քեզմէ իշխան մը պիտի ելլէ որ իմ Խորայէլ ժողովուրդս պիտի հովուէ» (Միք. Ե. 2.): Հերովդէս տեղեկանալով մանկան ծննդեան տեղը, իր մօտ կանչեց մոգերը եւ անոնց պատուիրեց որ Բեթղեհէմ երթան եւ հոն փնտռեն ծնած մանուկը եւ գտնելէն ետք՝ իրեն ալ իմացնեն, որպէս զի ինքն ալ երթայ եւ երկրպագութիւն ընէ անոր (Մտք. Բ. 2-9):

Սակայն մոգերը վերադարձին Հերովդէսին չհանդիպեցան, այլ ուրիշ քամբայով իրենց երկիրը գացին, ինչպէս հերոշտակէն հրաման առած էին երագին մէջ:

Հերովդէս երբ տեսաւ որ մոգերը իրեն չհանդիպեցան՝ սաստիկ զարացաւ եւ ջարդել տուած Բեթղեհէմի եւ շրջակայքի մէջ գտնուող մանուկները երկու տարեկան եւ անկէ վար (Մտք. Բ. 16):

Ինչո՞ւ. Որովհետեւ Հերովդէս նկարագրով կասկածամիտ եւ փառամոլ մէկն էր, այս պատճառաւ սպաննած էր իր կինը եւ զաւակները վախճալով որ օր մը կրնան իր գահը յաջողակել եւ վերջ տալ իր թագաւորութեան:

Իսկ քահանայապետները որ Քրիստոսի ծնունդէն իսկ յիշարիմ հակառակորդ թշնամիներ էին: Հերովդէս թագաւորին չկրցածը, իրենք կրցան յաջողիլովորդը գրգռելով՝ Հռովմէացի կուսակալէն ինդրեցին որ Քրիստոսը խաչուի: Որով իրենց նախանձին, վախին եւ փառասիրութեան յագուրդ տրուեցաւ: Եւ սակայն այդ խաչն իսկ եղաւ մարդուն արդարութիւնը եւ խաղաղութիւնը:

դ.- Խաղաղութիւնը: Աստուած իր խաղաղութիւնը յայտնեց ամբողջ աշխարհին իր մարմնացեալ խաղաղութեան Իշխանի

ծնունդովը:

Այսօր մարդկութիւնը աւելի քան երբեք պէտք ունի այդ խաղաղութեան: Որովհետեւ ամէն տեղ մարդիկ վախի եւ սարսափի մթնոլորտին մէջ կ'ապրին: Ոնիրներ, մահափորձեր, պատերազմներ, տեղ տեղ սովեր, երկրաշարժեր կ'ըլլան:

Փոքր աղջնակներու լլկումներ, բռնաբառումներ, հրէշային գայթակղութիւններ կը գործուին: Սիտայի հիւանդութիւնը որ գլուխը առած կ'երթայ: Բժիշկներ եւ մասնագէտներ դեղերու փնտռումներ կը կատարեն վարակուողները դարմանելու համար: Իսկ ոչ ոք դէմ կը խօսի կամ քայլ մը կ'առնէ այս խենէշ արարքները դատապարտելու կամ արգելի հանդիսանալու համար: Աշխարհական եւ եպիսկոպոսական ժողովները տեղի ունեցան, սակայն դժբախտաբար չընդունեցին որ այս մէկը Արդարութեան կողմէ պատուհաս մըն է կարգ մը մարդոց սանձարձակ ապրելակերպին համար: Իսկ Պօղոս առաքեալ պիտի ըսէր. Մարդիկ անարգ կիրքերով՝ արուները արուներու

հետ, կիները կիներու հետ խայտառակութիւն կը գործէին (տե՛ս Հռմ. Ա. 27):

Այս բոլոր ապականութեան եւ աղտեղութեան դիմաց, այս երեկոյ դարձեալ կը հնչեն Խաղաղութեան Իշխանին Սուրբ ծնունդը աւետող զանգակները: Ահաւասիկ Քրիստոս դուռը կեցած՝ կը գարնէ, եթէ մէկը անոր ձայնը լսէ՝ դուռը բանայ, անոր բով պիտի մտնէ եւ անոր հետ ընթրի՛ք պիտի ընէ (Յլտ. Գ. Ժօ):

Ուրեմն՝ բանանք մեր դռները եւ վառենք մեր տան երազները որ ներս մտնէ ծնեալ Նոր Արքան եւ ընթրի՛ք ընէ մեր հետ, եւ յետոյ տայ մեզի իր երկնային խաղաղութիւնը ըսելով.

«Խաղաղութիւն կը թողում ձեզի.

«Իմ Խաղաղութիւնս կու տամ ձեզի.

«Ձեզի չեմ տար գայն, ինչպէս այս աշխարհը կու տայ» (Յովհ. ԺՊ. 27):

Այն ատեն պիտի ունենանք աստուածային ողորմութիւնը, նշմարտութիւնը, Արդարութիւնը եւ ամենուն բաղձալի Խաղաղութիւնը: Ամէն:

ՎԱԶԼԷՆ . ՎՐԴ . ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ